ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

13 հոկտեմբերի 2017թ.

ՕՐԱԿԱՐԳ

2017թ. հոկտեմբերի 13-ին ժամը 11^{00} –ին կայացած
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

1. **Մարզի համայնքների 2017թ. ինը ամսվա սեփական եկամուտների կատարողականների մասին**
2. Զեկուցող՝ Ռ.Ներսեսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

2. Հանրային իրազեկման նպատակով մարզպետարանի ստորաբաժանումների և մարզի համայնքների հետ համագործակցված աշխատանքի ընթացքը

Զեկուցող՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ - ՀՀ Տավուշի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

3. 2016-2017 ուսումնական տարվա արդյունքները և նոր ուսումնական տարվա հիմնախնդիրները

Զեկուցող՝ Հ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության առաջատար մասնագետ

4. 2017թ. ամառային զորակոչի արդյունքների ամփոփում և 2017թ. ձմեռային զորակոչի նախապատրաստման աշխատանքների կազմակերպում

Զեկուցող՝ Գ.ՄԱՏԻՆՅԱՆ – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ, զորակոչային հանձնաժողովի քարտուղար

5. 2017թ.նոյեմբերի 5-ին կայանալիք ՏԻՄ ընտրությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին

Զեկուցող՝ Մ.ՄԽԻԹԱՐՅԱՆ – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցարով վարչության պետ

6. Այլ հարցեր

- ՀՀ Տավուշի մարզում ցեոլիտ նյութի արտադրության կարևորությունը գյուղատնտեսության համար (զեկուցող՝ Ահարոն Չիլինգարյան)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

13.10.2017թ.
ք.Իջևան

Նիստը վարում էր Տավուշի մարզպետ Հ.Աբովյանը:
Մասնակցում էին՝
Մարզխորհրդի 41 անդամներից ներկա էին 35-ը:
Նիստին ներկա էին ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները, մարզի դպրոցների տնօրենները, տարածքային զինկոմիսարները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, աշխատակազմի ղեկավարի տեղակալը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, լրագրողներ, հրավիրվածներ և այլք:

1. Մարզի համայնքների 2017թ. ինը ամսվա սեփական եկամուտների կատարողականների մասին

Զեկուցող՝ Ռ.Ներսեսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Մարզի 40 համայնքների 2017 թ. տեղական բյուջեների տարեկան նախատեսված եկամուտների հանրագումարը 2017 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմում է 3494.9 մլն. դրամ, որից սեփական եկամուտները՝ 933.9 մլն. դրամ, որը կազմում է ընդհանուր գումարի 26.7 %-ը, ՀՀ պետական բյուջեից տրամադրվող պաշտոնական դրամաշնորհները կազմում են 2457.2 մլն. դրամ, այդ թվում դոտացիան՝ 2349.8 մլն. դրամ, այլ աղբյուրներից հատկացվող դրամաշնորհներ՝ 103.8 մլն. դրամ:

2017 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքների եկամուտների փաստացի մուտքը կազմել է 2519.8 մլն. դրամ, որը կազմում է ինը ամիսների նախատեսվածի 97.4%-ը, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 576.0 մլն. դրամ կամ կատարվել է նախատեսվածի 88.6 %-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ՝ 61.7%:

2017 թվականի հոկտեմբեր 1-ի դրությամբ մարզի համայնքների սեփական եկամուտները 2016 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավել են հավաքագրվել 95.6 մլն. դրամով, այդ թվում գույքահարկի գծով՝ 30.8 մլն. դրամ, հողի հարկի գծով՝ 12.2 մլն. դրամ, տեղական տուրքի մասով՝ 3.9 մլն դրամ, գույքի վարձակալությունից եկամուտներ՝ 10.2 մլն. դրամ, պետական տուրքեր՝ 1.1 մլն դրամ, տեղական վճարներ՝ 72.2 մլն դրամ:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների կատարողականները ս/թ հոկտեմբերի 1-ի դրությամբ հետևյալն է.

- հողի հարկ – 2017 թ. ինը ամսում նախատեսվել է 133.7 մլն. դրամ, հավաքագրվել է 121.1 մլն. դրամ, կամ կատարվել է 90.5 %-ով (հավաքագրված գումարից 61.9 մլն. դրամը սահմանամերձ համայնքներին փոխանցված աջակցության գումարն է), իսկ տարեկան նախատեսվածի նկատմամբ կազմել է 65.4 %:

Հողի հարկի մասով ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Նորաշեն 20.9 %, Իծաքար 35.4 %, Գետահովիտ 43.2 %, Վարագավան 44.6 %, Տավուշ 47.5%, Վ. Ծաղկավան 49.5 %, Դիտավան 53.3 % (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը).

- գույքահարկ -հավաքագրվել է 212.6 մլն. դրամ կամ կատարվել է 98.4%-ով, իսկ տարեկան նախատեսվածի նկատմամբ կազմել է 64.9 %:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Բերքաբեր 43.8 %, Վազաշեն 44.5 %, Գետահովիտ 47.7 %, Լուսաձոր 68.7 %, Դիտավան 74.6 %, (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը):

- տեղական տուրքեր – հավաքագրվել է 26.3 մլն. դրամ կամ կատարվել է 89.8 %-ով, իսկ տարեկան նախատեսվածի նկատմամբ կազմել է 59.2 %:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Վ. Ծաղկավան 42.9 %, Տավուշ 43.0 %, Վ.Կ.Աղբյուր 44.4 %, Աչաջուր 49.9 %, Սարիգյուղ 53.6 %, Չինչին 60.0 %, իսկ Իծաքար համայնքն ընդհանրապես գումար չի հավաքագրել (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը):

- գույքի վարձակալությունից եկամուտներ - հավաքագրվել է 56.3 մլն. դրամ կամ կատարվել է 71.9 %-ով, իսկ տարեկան նախատեսվածի նկատմամբ կազմել է 52.1 %:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Պառավաքար 7.8 %, Բերքաբեր 15.6%, Վ.Ծաղկավան 15.9%, Խաշթառակ 29.9%, Իծաքար 30.3%, Աչաջուր 33.8%, Նորաշեն 34.5 %, Զորաթան 38.2 %, Մովսես 42.9 % Նավուր 42.9 % (կցվում է ցանկը): Չինարի համայնքը հոկտեմբերի 1-ի դրությամբ ընդհանրապես գանձում չի կատարել:

- տեղական վճարներ– հավաքագրվել է 121.5 մլն. դրամ կամ կատարվել է 79.4 %-ով, իսկ տարեկան նախատեսվածի նկատմամբ կազմել է 56.5 %:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Վ.Կ.Աղբյուր 27.5 %, Կողբ 51.3 %, Աչաջուր 67.7 %, Դիլիջան 70.2 %, Չինարի 71.4 %, Այգեպար 71.5 % (կցվում է ցանկը):

Նախորդ մարզխորհրդի նիստում համայնքների ղեկավարներին առաջարկվել էր հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական բազաներում մուտքագրել նախորդ տարիներին և ընթացիկ տարում հավաքագրված գումարները, որը կտրուկ կնվազեցներ նախորդ տարիներից առաջացած առկա ապառքները: ՈՒսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախորդ տարիների հավաքագրած գումարներից տեղեկատվական բազա է մուտքագրվել 30.3 մլն.դրամ գույքահարկի գումար, որից 6.9 մլն. դրամը մուտքագրվել է նախորդ մարզխորհրդի նիստից հետո ընկած ժամանակահատվածում, որից 5.9 մլն. դրամը Արծվաբերդի համայնքինն է:

Հողի հարկի մասով նախորդ տարիների հավաքագրած գումարներից մուտքագրվել է 38.3 մլն. դրամ, որից 15.4 մլն. դրամը մուտքագրվել է նախորդ մարզխորհրդի նիստից հետո ընկած ժամանակահատվածում, որից 12.7 մլն. դրամը Նոյեմբերյան (9.5մլն) և Այրում(3.2մլն) համայնքների կողմից կատարված մուտքերն են: Այսինքն նախորդ մարզխորհրդի նիստի հանձնարականի կատարումն ապահովել են Նոյեմբերյան և Այրում համայնքները՝ հողի հարկի մասով:

2017 թվականի անցած ինը ամիսների ընթացքում գանձապետական համակարգ մուտքագրված հողի հարկի և գույքահարկի ու տեղեկատվական բազա մուտքագրված գումարների

վերլուծությունը ցույց է տալիս, որ գույքահարկի մասով չմուտքագրած գումարը կազմում է 10.5 մլն. դրամ, հողի հարկի մասով՝ 32.9 մլն. դրամ: Այսինքն նախորդ մարզխորհրդում արձանագրված թերությունները մնացել են անփոփոխ, համայնքների կողմից հետևողական աշխատանքներ չեն իրականացվել ինչպես ընթացիկ տարվա հարկերը տեղեկատվական բազա մուտքագրելու, այնպես էլ նախորդ տարիների չմուտքագրած գումարները տեղեկատվական բազա մուտքագրելու ուղղությամբ, որը կարող էր բերել առկա ապառքների նվազեցմանը:

Համայնքների ղեկավարներին առաջարկվում է ամենօրյա բացատրական աշխատանքներ իրականացնել հողի հարկի և գույքահարկի ապառքներ ունեցող հարկատուների հետ ստեղծված իրավիճակը շտկելու, նախորդ տարիներից առաջացած հողի հարկի և գույքահարկի ապառքները հավաքագրելու ու սահմանված կարգով տեղեկատվական բազա մուտքագրելու, տեղական բյուջեով նախատեսված սեփական եկամուտները կատարելու ուղղությամբ:

Սույն թվականի հոկտեմբերի 13-ի դրությամբ մարզի համայնքների և ենթակա կազմակերպությունների աշխատակիցների աշխատավարձերը վճարել են ամբողջությամբ:

Սույն թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի համայնքների տեղական բյուջեների ֆոնդային մասի ազատ մնացորդը կազմել է 235.4 մլն. դրամ, իսկ ս/թ հոկտեմբերի 1-ի դրությամբ եկամուտները կազմել են 223.8 մլն. դրամ, դրամարկղային ծախսը՝ 231.2 մլն. դրամ: Ս/թ հոկտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքների տեղական բյուջեների ֆոնդային մասի ազատ մնացորդը կազմում է 228.1 մլն. դրամ:

ՀՀ Տավուշի մարզպետարանը պատրաստ է մարզի համայնքներին ցուցաբերել մեթոդական և խորհրդատվական օգնություն:

ՀՀ Տավուշի մարզպետ Հ. Աբովյանը առաջարկեց՝

Այն համայնքներում,որտեղ սեփական եկամուտների կատարողականը 50 տոկոսից ցածր է, մարզխորհրդի նիստից հետո նշյալ համայնքների ղեկավարները մնան և առանձին քննարկում կազմակերպվի նրանց մասնակցությամբ, որպեսզի համայնք առ համայնք քննարկվեն խնդիրները, դրանց լուծման ուղիները,որպեսզի մինչև տարեվերջ բարելավեն իրենց ցուցանիշը:

2. Հանրային իրազեկման նպատակով մարզպետարանի ստորաբաժանումների և մարզի համայնքների հետ համագործակցված աշխատանքի ընթացքը

Զեկուցող՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ - ՀՀ Տավուշի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

Յուրաքանչյուր տարի Տավուշի մարզխորհրդի նիստերում քննարկվում են մարզի համայնքների կողմից հանրային իրազեկման նպատակով կատարվող աշխատանքների ընթացքը: Նշվում է, որ ՏԻՄ-երը, որպես տեղեկատվություն տնօրինողներ, պարտավոր են հանրության առջև հանդես գալ հաշվետվությամբ և տեղեկատվություն ստանալու պահանջով իրենց հասցեագրված հարցումներին օրենքով սահմանված կարգով պատասխանել:

ՀՀ ,,Տեղեկատվության ազատության,, մասին օրենքը այն հիմնական օրենքն է, որով կարգավորվում է ինչպես ՏԻՄ-երի, այնպես էլ պետական մյուս մարմինների և տեղեկատվություն տնօրինող այլ կազմակերպությունների հանրության առջև հաշվետու լինելու մեխանիզմները: Իհարկե, Տեղական ինքնակառավարման մասին օրենքը նույնպես պարունակում է տեղեկատվության

ազատության և թափանցիկության բաղադրիչներ: Սակայն, ներկայացնեմ այն հիմնական սկզբունքները, որոնցով պիտի առաջնորդվեն ՏԻՄ-երը՝ ապահովելով հանրային իրազեկումը: Ինչ է տեղեկությունը և ով է տեղեկատվություն տնօրինողը, սրանք շատ պարզ սահմանված են վերոհիշյալ օրենքով: Տեղեկությունը անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձևավորված տվյալներն են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ/: Տեղեկություն տնօրինողների ցանկի մեջ նշված են նաև տեղական ինքնակառավարման մարմինները:

Բացի այն, որ տեղեկատվություն տնօրինողը, այդ թվում ՏԻՄ-երը պարտավոր են տեղեկատվություն տրամադրել, եթե իրենց դիմել են դրա պահանջով և եթե դրա մերժման հիմքերը սահմանված չեն օրենքով, գոյություն ունի պարտադիր հրապարակման տեղեկատվություն, որը ՏԻՄ-երը պարտավոր են հրապարակել: Պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանվում է օրենքով: ՏԱ մասին ՀՀ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները և կատարված փոփոխությունները.

1.հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները,
2. բյուջեները,
3.հաստիքացուցակները,
4.պաշտոնատար անձանց անուն-ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
5. մարմնի/կազմակերպության կողմից տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տրամադրման կարգը,
6. տվյալ մարմնի՝ շրջակա միջավայրի վրա ներգործությունը,
7. հասարակական միջոցառումների ծրագրերը,
8. քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը,
9. աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները),
10.տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը,

11.ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը եւ այլն:

Ի դեպ, պարտադիր եւ անհապաղ հրապարակման են ենթակա նաեւ կատարվող փոփոխությունները:

Հրապարակման միջոցներն ընտրում է ինքը մարմինը: Եթե հիշում եք, ժամանակին մենք աշխատեցինք համայնքների հետ և համատեղ տեղեկատվական ցուցատախտակներ տեղադրեցինք բավականին թվով համայնքներում, հատկապես գյուղերում կարելի է շարունակել օգտվել այդ ցուցատախտակների հնարավորություններից, սակայն հիմա ինտերնետն արդեն ավելի մեծ տարածում ունի և կարելի է օգտվել դրա հնարավորություններից: Եթե մարմինն ունի ինտերնետային կայք, ապա կայքում պարտադիր է դրանց տեղադրումը: Մեր համայնքներն, իհարկե բոլորը չունեն կայք, սակայն քաղաքային համայնքներն ունեն: Թարմացրեք Ձեր կայքերը պարբերաբար՝ հատկապես ուշադրություն դարձնելով վերոհիշյալ ցանկում զետեղված պարտադիր տեղեկատվության հրապարակմանը: Անհրաժեշտության դեպքում մարզպետարանը պատրաստ է

աշխատել Ձեր աշխատակազմի հետ՝ տրամադրելով անհրաժեշտ մեթոդական ցուցումներ:

- Վազաշեն համայնքի ղեկավար Լ. Բաղիրյանը և Բերդի տարածքային զինվորական կոմիսար Գ. Խաչատրյանը բարձրացրեցին հետևյալ հարցը.
  Հաճախակի լրագրողների կողմից հեռախոսի կամ հեռահաղորդակցության այլ կապերի միջոցով անվտանգության հարցերի վերաբերյալ հարցեր են հնչում, և համայնքի ղեկավարներն ու զինվորական կոմիսարները չեն կարողանում և՛ հարցին պատասխանեն և՛ պահեն տեղեկատվության ազատության մասին օրենքի համապատասխան կարգը: ՀՀ Տավուշի մարզպետ Հ. Աբովյանը հորդորեց բոլորին, որ եթե հարցը վերաբերում է անվտանգության հարցերին, ապա հղում անելով օրենքի համապատասխան հոդվածը, ներկայացրեք, որ տվյալ հարցը հրապարակային քննարկման կամ պատասխանի ենթակա չէ, քանի որ այն պարունակում է անվտանգության տարրեր

3. 2016-2017 ուսումնական տարվա արդյունքները և նոր ուսումնական տարվա հիմնախնդիրները

Զեկուցող՝ Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության առաջատար մասնագետ

	2016-2017 ուստարում	2017-2018 ուստարում
Դպրոցների ընդհանուր թիվը	81	80
Ավագ դպրոցների թիվը	4	4
Մարզպետարանի ենթակայության դպրոցների ընդհանուր թիվը, որից՝	77	76
Միջնակարգ դպրոցների թիվը	52	52
Հիմնական դպրոցների թիվը	23	23
Վարժարանների թիվը	2	1
Դասարանների ընդհանուր թիվը	918	922
Դասարանների թիվը մարզպետարանի ենթակայության դպրոցների	884	891,5
Դասարանների թիվը ավագ դպրոցների	34	31
Աշակերտների ընդհանուր թիվը	15832	15942
Աշակերտների թիվը/մարզպետարանի ենթակայության/	15089	15328
Աշակերտների թիվը/ավագ դպրոցների/	738	662
Առաջին դասարանցիների թիվը	1714	1553
Շրջանավարտների ընդհանուր թիվը	970	510
Շրջանավարտների թիվը/մարզպետարանի	742	414

ենթակայության դպրոցներում/		
Շրջանավարտների թիվը/ավագ դպրոցներում/	228	96
Միասնական քննություններին մասնակցած շրջանավարտների թիվը	445	-
Ուսուցիչների ընդհանուր թիվը	1987	1987
ՈՒսուցիչների թիվը մարզպետարանի ենթակայության դպրոցներում	1900	1900
Ատեստավորված ուսուցիչների թիվը մարզպետարանի ենթակայության դպրոցներում	1758	-
ՈՒսուցիչների թիվը ավագ դպրոցներում	87	87
ՈՒսումնաօժանդակ անձնակազմի ընդհանուր թիվը	947	947
ՈՒսումնաօժանդակ անձնակազմի թիվը ավագ դպրոցներում	77	77
ՈՒսումնաօժանդակ անձնակազմի թիվը մարզպետարանի ենթակայության դպրոցներում	865	865
Բազմահամակազմ դասարան ունեցող դպրոցների թիվը	32	32
Բազմահամակազմ դասարանների թիվը	85	85
Նախակրթարանների թիվը	10	16
Նախակրթարաններում ընդգրկված 5-6 տարեկան երեխաների թիվը	162	189
Նախադպրոցական հիմնարկների թիվը	48	48
Նախադպրոցական հիմնարկներում ընդգրկված երեխաների թիվը	3213	3215
Նախադպրոցական հիմնարկների աշխատողների թիվը	509	509
Քոլեջների թիվը	5	5
ՈՒսումնարանների թիվը	1	1
Մարզում գործող ԲՈՒՀ-երի թիվը	2	2
ՈՒսուցիչ/աշակերտ	1/9	1/9

1.ԱՏԵՍՏԱՎՈՐՎԱԾ ԵՎ ՏԱՐԱԿԱՐԳ ՍՏԱՑԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԻՎԸ

Մարզպետարանի ենթակայության դպրոցներում աշխատող ուսուցիչների թիվը հասնում է 1900-ի, որոնց մեծ մասն ունի բարձրագույն կրթություն: Յուրաքանչյուր տարի ատեստավորվում է ուսուցիչների 1/5-ը: Ատեստավորման գործընթացին նախորդում է ուսուցիչների վերապատրաստումը, որը հիմնականում իրականացվում է Կրթության ազգային ինստիտուտի Տավուշի մասնաճյուղում:

2016-2017 ուսումնական տարում նոյեմբեր-դեկտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածում ատեստավորվել է 241 ուսուցիչ: 2016թ.-ին Կրթության ազգային ինստիտուտի Տավուշի մասնաճյուղում ուսուցիչների վերապատրաստումն իրականացվել է 2017թ. ապրիլի 13-ից մինչև հունիսի 13-ն ընկած ժամանակահատվածում մարտ-հունիս ամիսներին վերապատրաստվել է ուսուցիչների 20 խումբ՝ 355 մասնակցով: Վերապատրաստված ուսուցիչների ատեստավորումը նախատեսվում է անցկացնել 2017թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

Իրականացվում է նաև տնօրենների վերապատրաստման և հավաստագրման գործընթացը: 2017թ փետրվար-մարտ ամիսներին տնօրենների վերապատրաստմանը մասնակցել է 21 անձ, որից՝ 7-ը գործող տնօրեն: Տնօրենների վերապատրաստումն իրականացրել են կրթության ազգային ինստիտուտի Տավուշի մասնաճյուղը և <<Կրթություն առանց սահմանի>> կազմակերպությունը:

Փաստաթղթային ատեստավորումից հետո տարակարգի ստացման համար 2016-2017թթ. ընթացքում մարզից տասներկու ուսուցիչ դիմել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն, և նախարարը՝ հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի որոշումները, նրանց շնորհել է որակավորման առաջին աստիճանի տարակարգ:

2. ՄԱՐԶՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻԿՐՈԾՐԱԳՐԵՐ

Արդեն 6-րդ տարին է, որ ՀՀ Տավուշի մարզն ընդգրկվել է <<Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում>> ենթածրագրում: 2016թ.-ի նոյեմբերին նախակրթարաններ են բացվել մանկապարտեզ չունեցող ևս 6 համայնքում:

Քանի որ նախադպրոցական ուսումնական հաստատությունները դիտարկվում են որպես կրթության կարևորագույն օղակ, աշխատանքներ են տարվում մանկապարտեզներ և նախակրթարաններ հաճախող երեխաների թվի ավելացման ուղղությամբ:

3. ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2017թ. փետրվարի 20-ից մինչև մարտի 9-ը անցկացվել է դպրոցականների օլիմպիադաների երրորդ (մարզային) փուլը: Մրցութային առաջադրանքները կազմել են հանրապետական առարկայական հանձնաժողովները: Մարզային փուլին մասնակցել է 252 աշակերտ, որից 80-ը իրավունք է ստացել մասնակցելու դպրոցականների առարկայան օլիմպիադաների հանրապետական փուլին: Մարզպետի կողմից հաստատված հանրապետական փուլի մասնակիցների հայտերը՝ բացառությամբ մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության և ինֆորմատիկայի (վերջիններս անցկացվել են այլ ընթացակարգով), ներկայացվել են ՀՀ ԿԳՆ: Դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլի մասնակիցներից 4-ն արժանացել են դիպլոմների, 4-ը՝ գովասանագրերի: Մասնավորապես՝

1-ին կարգի դիպլոմ ստացողների թիվը	1/մաթեմատիկա/	Դիլիջանի կենտրոնական դպրոց
2-րդ կարգի դիպլոմ ստացողների թիվը	1/ֆիզիկա/	Իջևանի ավագ դպրոց
3-րդ կարգի դիպլոմ ստացողների թիվը	2/պատմություն, հայոց լեզու/	Իջևանի ավագ դպրոց, Կողբի թիվ 2 դպրոց
Գովասանագիր	4/ֆիզիկա,անգլերեն,	Բերդի ավագ դպրոց, Դիլիջանի ավագ դպրոց,

ստացողների թիվ	գերմաներեն, պատմություն/	Բերդավանի միջնակարգ դպրոց, Այրումի միջնակարգ դպրոց

4. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Մարզի հանրակրթական դպրոցներում 2016-2017 ուստարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

ՀՀ կառավարության ծրագրում ներառված է եղել «Մշակութային կազմակերպություն-դպրոց» աբոնեմենտային համակարգի ներդրման պիլոտային ծրագիրը, որն իրականացվել է Երևանում՝ սահմանամերձ և սահմանապահ համայնքների հիմնական դպրոցների միջին դասարաններում սովորող աշակերտների (10-14 տարեկան) համար. երեք միջոցառում՝ մեկ ներկայացում, մեկ համերգային ծրագիր և մեկ թանգարանային այցելություն: Օրապահիկի և գիշերավարձի ծախսերը Երևան քաղաքում ֆինանսավորվել են ծրագրի շրջանակներում, իսկ տրանսպորտային ծախսերը մարզից Երևան և հակառակ ուղղությամբ հոգացել է մարզպետարանը:

Հանրակրթական դպրոցներում անց են կացվել «Երկնքից երեք խնձոր ընկավ...» հեքիաթասացության և բարբառի 8-րդ մրցույթ-փառատոնը, որի եզրափակիչ փուլը տեղի է ունենալու 2016 թ. <<Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում>>: Մարզից փառատոնին կմասնակցեն լավագույն ճանաչվել են Նոյեմբերյանի ավագ դպրոցի և Իջևանի թիվ 3 հիմնական աշակերտները:

Հայաստանի ազգային կինոկենտրոնի նախաձեռնությամբ և մարզպետարանի աջակցությամբ իրականացվել է <<Կինոաշուն. ազգային կինո ամիս>> ծրագիրը, որի շրջանակներում մարզի մի շարք դպրոցներում անց են կացվել կինոդիտումներ:

Անց է կացվել <<Նամակ զինվորին>> թեմայով շարադրությունների մրցույթ՝ նվիրված հայրենիքի սահմանների պաշտպանության ժամանակ զոհված, արիությամբ աչքի ընկած զինծառայողներին: Մրցույթին մասնակցել են 8-12-րդ դասարանների աշակերտները: 10 լավագույն շարադրությունները ներկայացվել են ՀՀ ԿԳՆ: Իրականացվել է «Մեր մեծերը» ծրագիրը, որի նպատակը նոր ձևավորվող սերնդի մեջ հայրենասիրություն արմատավորելն ու հայապահպանությանը նպաստելն է: Այս տարի «Մեր մեծերը» ծրագրում ընգրկվել են Այվազովսկին և այլոք : Համաշխարհային Հայկական Կոնգրեսը Ռուսաստանի հայերի միության և ՀՀ ԿԳՆ հետ համատեղ, մարզպետարանի աջակցությամբ անց է կացրել <<Ռուսական երգի փառատոնը>> մրցույթը: Հաշմանդամություն ունեցող անձանց համար կազմակերպվել է ներկայացումների մրցույթ, հաղթող է ճանաչվել Կողբի թիվ 2 միջնակարգ դպրոցը:

2016թ. նոյեմբերի տեղի ունեցավ ասմունքի հանրապետական 8-րդ մրցույթ-փառատոնի եզրափակիչ փուլը, որը նվիրված էր Սիլվա Կապուտիկյանի և Մարո Մարգարյանի հոբելյաններին: Տավուշի մարզից հանրապետական փուլին մասնակցելու իրավունք էին ստացել մրցույթի մարզային փուլի 8 աշակերտ, հանրապետական փուլում առաջին մրցանակի է արժանացել Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոցի, Իջևանի ավագ դպրոցի աշակերտները:

<Անտարես>> հրատարակչությունը ՀՀ ԿԳՆ հետ համատեղ, մարզպետարանի աջակցությամբ կազմակերպել և անց է կացրել <<Ընթերցման հանրապետական օլիմպիադա-2017>> միջոցառումը: Հանրապետական փուլում հաղթող է ճանաչվել Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցի աշակերտը:

Տավուշի մարզպետարանի անմիջական աջակցությամբ Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մշակութային միջոցառումների մի ամբողջ շարք է անցկացվել մարզում:

2016-2017 ուստարում մարզի հանրակրթական բոլոր դպրոցները մեծ շուքով նշել են ՀՀ պետական բոլոր տոները՝ <<Բանակի օր>>, <<Կանանց, մայրության, գեղեցկության և սիրո>> տոներ, <<Հաղթանակի և խաղաղության>> տոն, <<Շուշիի ազատագրման օր>>, <<Հանրապետության

տոն>>, <<Երեխաների իրավունքների պաշտպանության օր>>, <<Գիտելիքի, գրի և դպրության օր>>, <<Անկախության 26-ամյակ>>-ին նվիրված տոներ, նշվել է Մեծ եղեռնի 102-րդ տարելիցը, երկրաշարժի տարելիցը, և այլն:

Մարզի բոլոր կրթական հաստատություններում անց են կացվել <<Ոսկե աշուն>> խորագրով միջոցառումներ, նշվել են նաև եկեղեցական այնպիսի տոներ, ինչպիսիք են՝ <<Սուրբ ծնունդ>>-ը, <<Սուրբ Սարգիս>>-ը /Երիտասարդների օրհնության օրը/, <<Տյառնընդառաջ>>-ը, <<Սուրբ Զատիկ>>-ը, <<Խաղողօրհնեք>>-ը: Կազմակերպվել և անց են կացվել <<Ծաղկի և երգի>>, <<Վերջին զանգ>>, <<Պահպանենք մեր ավանդույթները>> խորագրերը կրող և այլ միջոցառումներ:

Մարզի հանրակրթական բոլոր դպրոցներում ստեղծվել են <<Պատանի երկրապահ>> ակումբներ: 2016-2017 ուստարում երկու փուլով անցկացվել են սերժանտական դասընթացներ: Դասընթացների ավարտից հետո անցկացվել են ստուգարքներ: Դեկտեմբերի 4-ին մարզում իրականացվել են <<Հաշմանդամների իրավունքների պաշտպանության>> միջազգային օ

5.ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ /ԽՆԴԻՐՆԵՐ,ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ/

Ներառական կրթության գաղափարները ՀՀ Տավուշի մարզում սկսվել է քննարկվել դեռևս 1999թվականից, երբ մարզում գործում էին <<Հույսի կամուրջ>> հասարակական կազմակերպության կենտրոնները (1999թ-ից Դիլիջանում, 2003թ-ից Իջևանում, 2004թ-ից Բերդում, 2005թ-ից Նոյեմբերյանում):

ՀՀ կառավարության 27.01.2011թ. թիվ 46-Ն որոշման համաձայն 2011թ-ից մարզի բոլոր դպրոցներն անցան ներառական կրթության համակարգի:

Ներառական կրթությունը Տավուշի մարզի դպրոցներում դարձել է իրականություն և արդեն տվել է իր արդյունքները, ինչպես անհատական մակարդակում,այնպես էլ համայնքում՝ հաղթահարելով առկա կարծրատիպերը՝ մարդասիրական արժեքների տարածման և ամրապնդման շնորհիվ: Ծրագրի իրագործման ընթացքում առկա են ներառման բազմաթիվ հաջողված օրինակներ.

- ստեղծվել է հանդուրժողականության մթնոլորտ յուրաքանչյուր դպրոցում:
- Տավուշի մարզում երեխաներն ապրում են իրենց ընտանիքներում և կրթություն են ստանում իրենց իսկ համայնքի դպրոցում:

Ներառական կրթության իրականացումը Տավուշի մարզում ցույց տվեց հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հասարակության լիիրավ անդամ դարձնելու անհրաժեշտությունը, որի արդյունքում շահում է ողջ հասարակությունը:

2016-2017 ուս. տարում Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից տրված եզրակացության հիման վրա վկայագրվել և ներառական կրթության համակարգում ընդգրկվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 150 երեխա:

6.ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ, ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Համաձայն «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 9-րդ մասերի և ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2016թ. դեկտեմբերի 23-ի N 1335-Ա/2 հրամանով հաստատված ՀՀ կրթության պետական տեսչության 2017թ. աշխատանքային ծրագրի 4-րդ կետի, հիմք ընդունելով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի 04.04.2017թ-ի N25-Ա կարգադրությունը՝ ՀՀ Տավուշի մարզի թվով 27 հանրակրթական ուսումնական հաստատություններում 2017թ. ապրիլի 10-ից 28-ը իրականացվել են կրթական գործունեության ուսումնասիրություններ: ՀՀ Տավուշի մարզպետի և ՀՀ կրթության պետական տեսչության պետի կողմից խախտումներ ունեցող դպրոցներին տրվել են պարտադիր կատարման հանձնարարականներ:

7.ՋԵՌՈՒՑՈՒՄ, ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ / ԽՆԴԻՐՆԵՐ, ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ/

Մարզի 77 հանրակրթական դպրոցներից 32-ն ունեն լոկալ ջեռուցում, 2 դպրոց ջեռուցվում է գազի վառարաններով, 2-ը՝ էլեկտրաէներգիայով և 41 դպրոց ջեռուցվում է դիզելային վառելիքի և փայտի վառարաններով:

Կրթական հաստատությունները վերանորոգելու նպատակով 2016թ.-ին պետբյուջեից տրամադրվել է 373,2 մլն. Դրամ, իսկ 2017թ.-ին 1,321,9 մլն. դրամ:

8. ԴԱՍԱԳՐՔԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ/ԽՆԴԻՐՆԵՐ, ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ/

Սահմանված ժամկետում ուսումնասիրվել և <<Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ>> է ներկայացվել 2017 2018 ուսումնական տարում անհրաժեշտ դասագրքերի պատվերը: Ի կատարումն ՀՀ նախագահի հանձնարարականի՝ մարզի սահմանամերձ համայնքների դպրոցների աշակերտները դասագրքերը ստացել են անվճար:

9. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ, ԱՄԱՌԱՅԻՆՀԱՆԳՍՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Սովորողների արտադասարանական պարապմունքներն իրականացվում են դպրոցներում գործող համապատասխան խմբակներում: Ամռան ընթացքում երեխաների հանգիստը կազմակերպվել է ճամբարներում: Մասնավորապես, ս/թ հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 15-ն ընկած ժամանակահատվածում Տավուշի մարզից Հանքավանի <<Լուսաբաց>> ճամբարում հանգստացել է 220 երեխա /3 հերթափոխով 80, 80 և 60 երեխա, յուրաքանչյուր խումբը 20 օրով/: Այդ ճամբար են մեկնել հիմնականում սոցիալապես անապահով և բազմանդամ ընտանիքների երեխաները, <<ՍՕՍ-մանկական գյուղի>> շահառու ընտանիքների երեխաները, <<Դիլիջանի երեխայի խնամքի եւ պաշտպանության գիշերօթիկ հաստատության>> աշակերտները, ինչպես նաև <<Պատանի երկրապահ>> ակումբի անդամները: Աշակերտներին տեղափոխող մեքենաներին ուղեկցել են ավտոճանապարհային տեսուչները:

Թվով 25 համայնքներում կազմակերպվել են ամառային ճամբարներ: Ճամբարներ է կազմակերպել նաև <<Վորլդ վիժն>> կազմակերպությունը:

Նոյեմբերյանի տարածաշրջանում ճամբարներ են կազմակերպել <<Նոյաստղ>>, <<Հակինթ>>, <<Լուսածիր>>, <<Հույսի կամուրջ>>, <<Ոսկե ծղի>>, <<Դեբեդ>> հասարակական կազմակերպությունները:

Տավուշի միջնակարգ դպրոցը ս/թ հունիսի 12-ից մինչև հուլիսի 3-ը կազմակերպել է <<Տավուշն իր գիրկն է կանչում>> խորագրով ամառային ճամբար, որի նպատակն էր ռուսաստանաբնակ տավուշցի երեխաներին հայրենիք հրավիրելը, հասակակիցների հետ սերտ կապ հաստատելը, ինչպես նաև հայեցի դաստիարակությանը նպաստելը: Ճամբարի կազմակերպման աշխատանքները կատարվում է դպրոցի շրջանավարտ Գեղամ Առաքելյանի հովանավորությամբ:

10. ՄԱՐԶՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարզի հանրակրթական դպրոցներում 2016-2017 ուստարվա առկա խնդիրներից է ուսուցչի թափուր տեղերի համալրման հարցը: Վերջինս փորձում ենք լուծել համագործակցելով <<Դասավանդիր, Հայաստան>> հիմնադրամի հետ, որի կողմից մարզի սահմանամերձ

դպրոցներ են գործուղվել 6 մասնագետ՝ Դիլիջանի թիվ 4 հիմնական/ հատուկ մանկավարժ/, Չորաթանի միջնակարգ / անգլերեն լեզու/, Ակնաղբյուրի հիմնական /ֆիզկուլտուրա/, Վազաշենի միջնակարգ / աշխարհագրություն, մաթեմատիկա/ և Բերդի վարժարան /անգլերեն լեզու/: 2017-2018 ուսումնական տարում Տավուշի մարզ են գործուղվել ևս 4 մասնագետ՝ Ներքին Կարմիրաղբյուրի /հայ եկեղեցու պատմություն/, Չորաթանի / ռուսաց լեզու, անգլերեն լեզու/ և Մովսեսի /ֆիզկուլտուրա/ միջնակարգ դպրոցներում դասավանդելու համար:

Սահմանամերձ դպրոցներում ուսուցիչների թափուր տեղերը համարելու նպատակով առաջարկել ենք ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար ֆակուլտետում բացել <<Ռուսաց լեզու և գրականություն>> և <<Հատուկ կրթություն>> բաժիններ, իսկ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում և Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում ընդունելության նպատակային տեղեր հատկացնել համապատասխանաբար <<Հատուկ կրթություն>>, <<Օտար լեզուներ /ռուսաց լեզու և գրականություն/>>, <<Սկզբնական կրթություն /տարրական մանկավարժություն և մեթոդիկա/>> և <<Մարզչամանկավարժական ֆակուլտետ>>-ներում:

Մարզում իրականացվող նորարարություններից էր մայրաքաղաքի դպրոցների հետ հեռավար /օնլայն/ դասերի անցկացումը: Նմատատիպ դասեր անցկացվել է մարզի 5 դպրոցում: Քանի որ մարզի հանրակրթական դպրոցներն ունեն լաբորատորիաների վերազինման կարիք, ուստի հեռավար դասերի ընթացքում կիրառվող փորձերը հնարավորություն են տալիս որոշ չափով լրացնել այդ բացը: Տեսադասեր անցկացնելու համար անհրաժեշտ է դպրոցներն ապահովել ժամանակակից համակարգչային տեխնիկայով, ինչը հանդիսանում է հիմնախնդիրներից մեկը:

Մարզի 27 դպրոցում գործում է ռոբոտաշինության խմբակ: <<Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության>> կողմից նման խմբակներ ունեցող դպրոցներին ի պահ տրամադրվել են համակարգչային տեխնիկա, ռոբոտաշինության համար նախատեսված ուսումնական հավաքածու և ավտոմատացման հավաքածու:

11. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԵՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Տավուշի մարզի տարրական կրթություն իրականացնող 75 դպրոցներից 74-ը նախորդ ուսումնական ծրագրում ընդգրկված էին ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից իրականացվող «Դպրոցական սնունդ» ծրագրում, 75-րդ դպրոցը սեպտեմբերից կմիանա ծրագրին՝ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի նախաձեռնությամբ դպրոցի խոհանոցում և ճաշարանում իրականացված նորոգումների և տրամադրված խոհանոցային սարքավորումների շնորհիվ:

2017թ-ի փետրվարից Տավուշի մարզում ծրագրում ընդգրկված դպրոցները անցում կատարեցին «Դպրոցական սնունդ» ծրագրի գումարային մոդուլին, սննդատեսակների գնումները կատարելով ինքնուրույն, ստացան անհրաժեշտ գիտելիքներ և փորձ՝ պատրաստ լինելու և սահուն անցում կատարելու «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրին: Այս նախաձեռնությունը լուրջ ազդակ հանդիսացավ նաև խրախուսելու տեղական գյուղատնտեսական արտադրությունը և ավելացնելու տեղական ապրանքաշրջանառությունը:

ՄԱԿ ի Պարենի համաշխարհային ծրագիրը մեծ աշխատանքներ է կատարել բարելավելու դպրոցների խոհանոցների և ճաշարանների սանիտարական վիճակները, 75 դպրոցներից 25-ի խոհանոցները և ճաշարանները նորոգվում են ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից տրամադրված շինարարական նյութերով, ներառյալ դռների և պատուհանների փոխումը: ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի նախաձեռնությամբ տարբեր դոնորների կողմից վերանորոգվել են մարզի 19 դպրոցների խոհանոցներ և ճաշարաններ(ՀՕՖ – 8 դպրոց, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր – 7 դպրոց, Հայաստանի Մանուկների հիմնադրամ – 3 դպրոց, Փարոս հիմնադրամ – 1 դպրոց):

Մարզի 75 դպրոցներից 61-ը ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից արդեն իսկ ստացել են անհրաժեշտ խոհանոցային սարքավորումներ /տաք ջրի հարմարանքներ, սառնարաններ, գազի և

էլեկտրական վառարաններ, հաց թխելու սարքավորումներ, լվացարաններ ու պահարաններ, կշեռքներ/: Մնացած 14 դպրոցները սարքավորումներ կստանան այդ դպրոցների խոհանոցների և ճաշարանների վիճակները բարելավելուց հետո: 14 դպրոցներիցմեկում(Արծվաբերդի միջնակարգ) արդեն իրականացվում են նորոգման աշխատանքներ ՀՕՖ-ի կողմից, 13 դպրոցներում դեռևս դոնորներ չեն գտնվել այդ գործընթացի համար (մարզպետարանի կողմից նախաձեռնություն կա 3 դպրոցներում բարելավելու խոհանոցների և ճաշարանների սանիտարական վիճակները- Գանձաքար, Նոյեմբերյան թիվ 2 և Կողբ թիվ 2):

12.ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ /ԳԵՐԱԶԱՆՑԻԿՆԵՐ, ԵՐԿՏԱՐԵՑԻՆԵՐ/

2015-2016 ուստարում առաջադիմության վերաբերյալ արձանագրվել են հետևյալ ցուցանիշները՝

1. 3 մեդալակիր (Իջևանի ավագ դպրոց, Բերդավանի միջն.դպրոցից, Հաղթանակի միջնակարգ դպրոց/
2. գերազանցիկ՝ 2000 աշակերտ (որից 67-ը՝ 9-րդ դասարանցի)
3. երկտարեցի՝ չկա

13. 2017թ. ԲՈՒՀ-ԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2017թ. ՀՀ Տավուշի մարզից ՀՀ ԲՈՒՀ-երում հայտագրվել է 454 դիմորդ, որից 408-ն /89.9%/ ընդունվել է, ընդ որում 69-ը՝ անվճար հիմունքներով, 339-ը՝ վճարովի: Տավուշի մարզից ՀՀ ԲՈՒՀ-եր ընդունված դիմորդների թիվը ըստ բուհերի ունի հետևյալ պատկերը.

ԵՊՀ /Իջևանի մասնաճյուղ՝ հայտագրվել է 170 դիմորդ, ընդունվել է 144-ը,
ԵՊՀ՝ հայտագրվել է 93 դիմորդ, ընդունվել է 86-ը,
ՀՊՄՀ՝ հայտագրվել է 39 դիմորդ, ընդունվել է 37-ը,
ՀՊՏՀ՝ հայտագրվել է 37 դիմորդ, ընդունվել է 37-ը,
ԵՊԲՀ՝ հայտագրվել է 37 դիմորդ, ընդունվել է 35-ը,
ԵՊԼՀ՝ հայտագրվել է 17 դիմորդ, ընդունվել է 17-ը:

- Վ.Կարմիրաղբյուր համայնքի ղեկավար Կ. Չոբանյանը առաջարկեց համայնքի միջնակարգ դպրոցում իրականացնել ատտեստավորում, քանի որ համայնքում որոշ ծնողներ դժգոհ են մանկավարժական կազմի գիտելիքներից: Որին ի պատասխան մարզպետ Հ. Աբովյանը պատասխանեց,որ գոյություն ունի ատտեստավորման կարգ, և որ պետք է շարժվել այդ կարգին համապատասխան: Իսկ եթե կան դժգոհություններ, առաջարկեց դպրոցի տնօրենին իրականացնել դասալսումներ և գնահատական տալ համայնքի ղեկավարի նշված խնդիրները ունեցող մանկավարժների աշխատանքը և զեկուցել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանմանը:
- Նոյեմբերյան համայնքի Բաղանիս գյուղի վարչական ղեկավար Ն. Սահակյանը հետաքրքրվեց, թե արդյոք կան դպրոց չհաճախող երեխաներ: Հ. Խաչատուրյանը պատասխանեց, որ այս պահի դրությամբ Տավուշի մարզում չկան այդպիսի երեխաներ:

4. 2017թ. ամառային զորակոչի արդյունքների ամփոփում և 2017թ. ձմեռային զորակոչի նախապատրաստման աշխատանքների կազմակերպում

Զեկուցող՝ Գ.ՄԱՏԻՆՅԱՆ – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ, զորակոչային հանձնաժողովի քարտուղար

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2017թ. մայիսի 15-ի <<2017թ. ամառային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու համար>> ՆՀ-355-Ն հրամանագրով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. մայիսի 25-ի <<2017թ. ամառային զորակոչ կազմակերպելու մասին>> թիվ 669-Ն որոշման պահանջների, ՀՀ Տավուշի մարզպետի 2017թ. հունիսի 26-ի <<ՀՀ Տավուշի մարզում 2017թ. ամառային զորակոչ կազմակերպելու մասին>> թիվ 135-Ա որոշմամբ՝

- հաստատվել է մարզի տարածքային զինկոմիսարիատների զորակոչային հանձնաժողովների կազմերը,
- հանձնարարվել է զինկոմներին՝ 2017թ. զորակոչը անցկացնել սահմանված կարգով,
- հանձնարարվել է մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝ ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով, իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ,
- առաջարկվել է համայնքների ղեկավարներին՝ իրավասության սահմաններում ապահովել ամառային զորակոչի կազմակերպումը,
- հանձնարարականներ է տրվել և առաջարկվել հիմնարկ-ձեռնարկությունների ու կազմակերպությունների ղեկավարներին՝ ամառային զորակոչին սահմանված կարգով աջակցություն ցուցաբերելու:

2017թ.հունիս-հուլիս ամսներին կայացած մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերում քննարկվել են 2016թ. ձմեռային զորակոչի արդյունքներն ու 2017թ. ամառային զորակոչի խնդիրները, տարկետման ներկայացված անձնական գործեր:

Նիստերին քննարկվել են ժամկետային զինծառայությունից խուսափող պատանիների հարցը, որի ընթացքում հաճախակի է նշվել զորակոչի՝ որպես պետական կարևորագույն միջոցառման նշանակությունը: Իրադարձությունները փաստում են, որ մեր հանրապետության անվտանգության միջավայրը դեռևս մնում է փխրուն, հոլի ցանկացած իրադարձություններով և զարգացումներով, ուստի այն կազմակերպություններն ու ուսումնական հաստատությունները, որոնք առնչվում են նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների դաստիարակման և ուսուցման խնդիրներին, պետք է այս հարցը դասեն ամենակարևորագույնների շարքում և ամենօրյա

հետևողականություն ցուցաբերեն զորակոչին առնչվող միջոցառումները ժամանակին և սահմանված կարգով իրականացնելուն: Այստեղ կարևորվում է հատկապես համայնքների դերը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մի շարք համայնքներում զինկոմիսարիատներ ներկայացված ձև 2 ամփոփագրագրակները կազմվել են անպատասխանատու ձևով, թերություններով ու բացթողումներով, որի պատճառով կցագրման ենթակա շոշափելի թվով անձինք դուրս են մնացել հաշվառումից, դրանով կասկածի տակ դնելով մարզում զորակոչի առջադրանքի կատարումը: Արձանագրվել են նաև այնպիսի դեպքեր, երբ ցուցակներում գրանցվել են անձինք, որոնք մեր հանրապետության քաղաքացիներ չեն հանդիսացել: Սա հետագայում անդրադարձել է կցագրման արդյունավետության վրա, մեխանիկորեն իջեցնելով կցագրման կատարողականի ցուցանիշը:

Կցագրմանն առնչվող տարաբնույթ խախտումների ու թերությունների բացահայտման ու դրանց վերացման ուղղությամբ աշխատանքներ կատարելու նպատակով Տավուշի մարզպետի մոտ հրավիրված խորհրդակցություններում քննարկվել, ի ցույց են դրվել արձանագրված թերությունները և առաջարկվել է համայնքների ղեկավարներին սեղմ ժամկետում վերացնել թերություններն ու կցագրման միջոցառումները իրականացնել ''Զինապարտության մասին'' և ''Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքներին համապատասխան:

Հաշվետու ժամանակահատվածում մարզային զորակոչային հանձնաժողովի նախագահի կողմից հաստատվել են տարածքային զինկոմիսարիատների ներկայացրած աշխատանքային պլանները՝

- ռազմական ուսումնական հաստատությունները դիմորդ-թեկնածուներով համալրելու,
- տեղամասին կցագրված նախազորակոչիկներին զինվորական ծառայության նախապատրաստելու հիմնական միջոցառումների,
- ուսումնական հաստատությունների ՆԶՊ ծրագրերով ավագ դասարանի տղաների հետ երկօրյա դաշտային պարապմունքների,
- ՆԶՊ ուսումնասիրող պատանիների հետ հայրենասիրական դաստիարակչական ընդհանուր միջոցառումների,
- ուսումնական հաստատությունների զինղեկների հետ եռօրյա մեթոդական հավաքների վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունում կայացած հանրապետական հանձնաժողովի նիստում դրական են գնահատել մարզի զինկոմիսարիատների աշխատանքները:

Վերջին տարիներին մարզի դպրոցներում բավական դրական տեղաշարժ է կատարվել ՆԶՊ դասարանների, փառքի սրահների ձևավորման, սպորտ հրապարակների, զենքի պահպանման սենյակների կահավորման, ամրացման, ռազմական խաղերի կազմակերպման, հայրենասիրական

դաստիարակության և հայոց պատմության, ֆիզկուլտուրա առարկաների ուսումնական և քաղաքացիական պաշտպանության նյութատեխնիկական բազաների համալրման ուղղությամբ:

Բերդ, Նոյեմբերյան համայնքների ավագ. Մովսես և Չինարի համայնքների միջնակարգ դպրոցներում և թիվ 21/127 զորամասում տեղադրվել են ''Մենամարտ'' վարժասարքեր, որոնցից համաձայն պլան-ժամանակացույցի կարող են օգտվել նաև Բերդ և Նոյեմբերյան համայնքների մնացած դպրոցները: Մարզի սահմանամերձ համայնքներում ''Մենամարտ'' վարժասարքեր տեղադրելու գործընթացը հարկավոր է շարունակել:

2017թ.հունվարի 1-ի դրությամբ զինապահեստներով և զենքով ապահովված են 59 դպրոցներ: Մարզպետի կողմից հանձնարարություն է տրվել 2017թ. վերջնականապես ավարտել բոլոր դպրոցներում ՆԶՊ ծրագրով անհրաժեշտ ուսումնական դասարանների և ուսումնական զենքի ապահովումը:

2017թ. հուլիս ամսին մարզում իրականացվել է ամառային զորակոչ: Բոլոր զինկոմիսարիատներում մեկնարկը տրվել է հանդիսավոր միջոցառումներով՝ հրավիրվել են գեղարվեստական խմբեր, զինվորական նվագախումբ, նորակոչիկներին բանակ ճանապարհելու բարեմաղթանքներով հանդես են եկել պատերազմի վետերաններ, երկրապահ կամավորական ջոկատների ազատամարտիկներ, ծնողներ, զինկոմիսարիատի պատասխանատու աշխատակիցներ և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

Համայնքների ղեկավարները համայնքներում կազմակերպել են հանդիսավոր երեկոներ՝ մասնակից դարձնելով նախազորակոչային տարիքի պատանիների, պատերազմի վետերանների:

Մինչ ծառայության մեկնելը ՀՀ պաշտպանության նախարարության նախաձեռնությամբ նորակոչիկները այցելել են Մատենադարան, Ծիծեռնակաբերդ և Երևանի պատմության թանգարան:

ՀՀ Տավուշի մարզի տարածքային զինկոմիսարիատներին 2017 թվականի ամառային զորակոչին առաջադրանք է տրվել 297/299/, որից՝

Իջևանի զ/կ -89

Դիլիջանի զ/կ -50

Տավուշի զ/կ -78

Նոյեմբերյանի զ/կ -80

Զորակոչվել են՝

Իջևանի զ/կ -89

Դիլիջանի զ/կ -50

Տավուշի զ/կ -78

Նոյեմբերյանի գ/կ -82;

Զինկոմիսարիատներից ենթակա են եղել զորակոչի 590՝

Իջևանի գ/կ -200

Դիլիջանի գ/կ -114

Տավուշի գ/կ -139

Նոյեմբերյանի գ/կ -137

Ներկայացել են՝

Իջևանի գ/կ -194

Դիլիջանի գ/կ -112

Տավուշի գ/կ -133

Նոյեմբերյանի գ/կ -135

Ուսումը շարունակելու նպատակով ՀՀ ԶՄՕ 14/1 հոդվածով տրվել է տարկետում 34՝

Իջևանի գ/կ -13

Դիլիջանի գ/կ -6

Տավուշի գ/կ -7

Նոյեմբերյանի գ/կ -8

Ընտանեկան դրության պատճառով ՀՀ ԶՄՕ 13/1 հոդվածով տարկետում է տրվել 3՝

Իջևանի գ/կ -1

Նոյեմբերյանի գ/կ -2

Տրվել է տարկետում բուժման նպատակով և առողջական վիճակի պատճառով 5 ամսից 3 տարի ժամանակով 122՝

Իջևանի գ/կ -43

Դիլիջանի գ/կ -29

Տավուշի գ/կ -25

Նոյեմբերյանի գ/կ -25

Փոխանցվել է պահեստազոր սահմանային տարիքը լրանալու, առողջական և ընտանեկան պայմաններով 112՝

Իջևանի գ/կ -46

Դիլիջանի գ/կ -27

Տավուշի գ/կ -20

Նոյեմբերյանի գ/կ -19

2017 թվականի ամառային զորակոչին ներկայացել են նախկինում խուսափողներ 1՝

Իջևանի զ/կ -1

ժամկետային զինծառայությունից խուսափել են 14՝

Իջևանի զ/կ -6

Դիլիջանի զ/կ 2

Տավուշի զ/կ -4

Նոյեմբերյանի զ/կ-2

ՏԶկ-ներից ներկայացված տեղեկանքների հիման վրա ռազմական ուսումնական հաստատություններ թեկնածու ընտրելու առաջադրանքը 23՝

Իջևանի զ/կ -8

Դիլիջանի զ/կ -3

Տավուշի զ/կ -6

Նոյեմբերյանի զ/կ -6

Ընտրվել են ՌՈՒՀ-ի թեկնածու 18 ՝

Իջևանի զ/կ 0

Դիլիջանի զ/կ 1

Տավուշի զ/կ -13

Նոյեմբերյանի զ/կ -4

Ընդունվել են ՌՈՒՀ 8՝

Իջևանի զ/կ -0

Դիլիջանի զ/կ -1

Տավուշի զ/կ -6

Նոյեմբերյանի զ/կ -1

Կցագրման ենթակա 2001 թվականին ծնված 840 պատանիներից կցագրվել են 653-ը՝

Իջևանի զ/կ -226

Դիլիջանի զ/կ -115

Տավուշի զ/կ -145

Նոյեմբերյանի զ/կ -167

Պատրաստվել են <<C>> խմբի վարորդներ 43՝

Իջևանի զ/կ -16

Տավուշի զ/կ -27

Բոլոր զինկոմիսարիատներում համալրված են բժշկական հանձնաժողովները, պատվաստումները կատարվել են գրաֆիկին համապատասխան:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ 2017Թ. ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Անվանումը	Ընդամենը	Զինկոմիսարիատ			
			Իջևան	Դիլիջան	Տավուշ	Նոյեմբերյան
1.	Զորակոչի առաջադրանքը	297	89	50	78	80
2.	Կատարվել է	299 /101%/	89	50	78	82
3.	Ենթակա են զորակոչի	590	200	114	139	137
4.	Ներկայացել են	574	194	112	133	135
5.	Տրվել է տարկետում	159	58	35	32	34
	ա/ ուսման պատճառով	34	13	6	7	8
	բ/ ընտանեկան դրությամբ	3	2	0	0	1
	գ/ բուժման նպատակով	122	43	29	25	25
6.	Փոխանցվել են պահեստազոր	121	46	27	20	28
7.	Ներկայացել են նախկինում խուսափողներ	0	0	0	0	0
8.	Խուսափել են ժամկետային զինծառայությունից	14	6	2	4	2
9.	ՌՈՒՀ-ի թեկնածուի առաջադրանքը	23	8	3	6	6
10.	Ընտրվել է ՌՈՒՀ-ի թեկնածու	18	0	1	13	4
11.	Ընդունվել են ՌՈՒՀ	8	0	1	6	1
12.	Պատրաստվել են "C" խմբի վարորդներ	43	16	--	27	--
13.	Կցագրման ենթակա	840	273	155	205	207
14.	Կցագրվել են	662/79%/	226/83%/	124/80%/	145/71%/	167/81%/
15.	Զինապահեստի առկայությունը	59	19	7	19	14
16.	Զենքով ապահովվածությունը	59	19	7	19	14

- Այրումի միջնակարգ դպրոցի տնօրենը հայտարարեց, որ նախազորակոչային տարիքի պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցառումներ են կազմակերպվում դպրոցում և համայնքում (Արծվիկ հայրենասեր, պատանի երկրապահ և այլն), նշեց որ վաղը՝ 14.10.2017 թ. Կողբի N զորամասում տեղի կունենա դպրոցականների մասնակցությամբ ռազմահայրենասիրական միջոցառում, և հրավիրեց բոլորին մասնակցելու այդ միջոցառմանը:

- Բերդի զինվորական կոմիսար Գ. Խաչատրյանը հարցրեց, որ երեխաները երբ գալիս ու ինչ-որ համայնքում գրանցվում են, բայց տվյալ համայնքային կենտրոնին ցուցակ չեն ուղարկում, որտեղ երևա նոր գրանցված մարդկանց անունները: Հարցրեց, թե ինչպե՞ս արվի, որ խնդիրը լուծվի, որը և կհեշտացնի նաև զինկոմիսարիատի խնդիրը նույնպես: Մարզպետ Հ. Աբովյանը մարզպետարանի աշխատակազմի ՀԳՄ և ՏԻ վարչության պետ Մ. Մխիթարյանին հանձնարարեց խնդիրը պահել ուշադրության կենտրոնում ու համապատասխան առաջարկներ ներկայացնի այն լուծելու համար:

5. 2017թ.նոյեմբերի 5-ին կայանալիք ՏԻՄ ընտրությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին

Զեկուցող՝ Մ.ՄԽԻԹԱՐՅԱՆ – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցարով վարչության պետ

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի պահանջով ս/թ նոյեմբերի 5-ին կայանալիք ՏԻՄ ընտրությունների արդյունքում Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի 17 համայնքները կմիավորվեն և կձևավորեն նոր՝ խոշորացված Բերդ համայնքը, կընտրվեն և համայնքի ղեկավարը, և ավագանու անդամները:

Մարզի Աչաջուր համայնքում կկայանա համայնքի ղեկավարի, իսկ Այգեհովիտ և Ենոքավան համայնքներում՝ ավագանու անդամների հերթական ընտրություններ:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համապատասխան համայնքների ղեկավարների որոշումներով սահմանվել են 27 տեղամասային կենտրոններ, որոնցից 22 Բերդի տարածաշրջանում, 2-ական՝ Աչաջրում և Այգեհովիտում, 1-ը՝ Ենոքավանում:

Սահմանված կարգով և ժամկետներում ընտրողների նախնական ցուցակները փակցվել են բոլոր ընտրատեղամասերում՝ ընտրողների համար տեսանելի վայրերում:

Համայնքների ղեկավարների կողմից ընդունվել են որոշումներ քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր հատկացնելու մասին: Բերդի քաղաքապետի նմանատիպ որոշումը ներկայացվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Սահմանված ժամկետներում խոշորացվող Բերդ համայնքի ավագանու ընտրությունների համար գրանցվել են 40 թեկնածուներ, որոնցից 9-ը ՀՀԿ անդամներ են, 3-ը՝ ԲՀԿ, 2-ը՝ <<Հայկական վերածնունդ>> կուսակցության, 3-ը՝ ՀՅԴ, իսկ 23-ը անկուսակցական են:

Համայնքի ղեկավարի թեկնածու է գրանցվել 4 հոգի, որից 2-ը ՀՀԿ անդամներ են, 2-ը՝ անկուսակցական:

Աչաջրում գրանցվել են համայնքի ղեկավարի 4 թեկնածուներ, որոնցից 3-ը ՀՀԿ անդամներ են, 1-ը ՀՅԴ անդամ:

Այգեհովիտ համայնքում գրանցվել են ավագանու անդամության 10 թեկնածուներ, որոնցից 6-ը ՀՀԿ անդամներ են, 4-ը անկուսակցական:

Ենոքավան համայնքում գրանցվել են ավագանու անդամության 11 թեկնածուներ, որոնցից 5-ը ՀՀԿ անդամներ են, 1-ը՝ <<Հայկական վերածնունդ>> կուսակցության, 5-ը անկուսակցական:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու մասին հայտերը սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ ԿԸՀ:

- Մ. Մխիթարյանը նաև հայտարարություն արեց, որ ս/թ հոկտեմբերի 21-ին կայանալիք շաբաթօրյակին կազմակերպչական և հնարավորինս շատ մասնակիցներ ներգրավելու ու հարակից առավել աղբաշատ տարածքները մաքրելու և այլ հարցեր մարզի համայնքների ղեկավարները և դպրոցների տնօրենները պահեն իրենց ուշադրության կենտրոնում:

6. Այլ հարցեր

- ՀՀ Տավուշի մարզում ցեոլիտ նյութի արտադրության կարևորությունը գյուղատնտեսության համար (զեկուցող՝ Ահարոն Չիլինգարյան)

  Մանրամասն ներկայացվեց ցեոլիտ նյութի օգտակարության մասին զեկույց, որը մեծ հետաքրքրությամբ ընդունվեց համայնքի ղեկավարների կողմից: Առավելապես այն համայնքների ղեկավարների կողմից, որտեղ առաջնային տեղ է զբաղեցնում գյուղատնտեսությունը: Առաջարկվեց ավելի մասնրամասն նոր զեկույցով, ավելի մեծ ու լայն շրջանակների մասնակցությամբ միջոցառում կազմակերպվի առաջիկայում, որը Ա. Չիլինգարյանի կողմից ընդունվեց ուրախությամբ:
- Բերդի զինկոմը հայտարարություն տարածեց, որ առաջիկայում ստեղծվելու է կանանց ստորաբաժանում՝ պայմանագրային հիմունքներով, և որ հետաքրքվողները կարող են դիմել Բերդի զինկոմիսարիատ աշխատանքի պայմաններին և այլ մանրամասների ծանոթանալու համար:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Հ.ԱԲՈՎՅԱՆ